

# ՈՍՏԱՅՆ

ՃԵՊԵԼ ՄՈՒՍԱՅԻ ՀԻՒՍՈՒԱԾԵՂԵՆԻ  
ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

---

## ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՎԱՐԿԵՐԱՑՈՒԱՌ ՍԻՒՐԵԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵՆՔՆ

ՀԱՅՈՒ 3975 ԵԽ 15 ՅՈՒՆԻՍ 1935 ԹՈՒԱԿԻՐ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԴ.

---

1935


ՅՈՒԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ՏԵՐ ՍՈՀԱԿԵԱՆ

ՀՈԼԵՊ

677.4

11-53



25 SEP 2010

# ПУСИЗЫ

Жалын. Чарынан анылышынан  
шылдын сүчөрүнен

# АЛДАЙЫКЫН

Жалынан жарылган шылдын  
сүчөрүнен

105 932 25

677-4  
7-53

ԹԹՍ 50. 81

# ՈՍՏԱՅՆ

ՃԵՊԵԼ ՄՈՒՍԱՅԻ ՀԻՒՍՈՒԱԾԵՂԵՆԻ  
ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

## ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՎԱՀԱՐԱԶՈՒԱՌ ՍԻՒՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵՆՔՆ  
ՀԱՄԱՐ 3975 ԵԽ 15 ՅՈՒՆԻՒ 1935 ԹՈՒԱԿԻՐ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒ.

1935

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
Ա. ՏԵՐ ՍՈՀԱԿԵԱՆ  
ՀԱԼԵՊ

16.07.2013

24.345

ՏԵՍԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՐԱՄԱՐԴԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



65607-67



## ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՈՍՏԱՅՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ա. ԳԼՈՒԽ

ՆՊԱՏԱԿ - ԱՆՈՒՆ - ԿԵԴՐՈՆ - ՏԵԽՈՂՈՒԹԻՒՆ

Յօդ. 1 — Ներկայ կանոնագրութեամբ ստեղծուած և հետագային ստեղծուելիք բաժնեատմսերու աէքերուն միջեւ կազմուած է սիւրխական անանուն ընկերութիւն մը: Այս ընկերութիւնը պիտի ենթարկուի երկրին մէջ կիրարկուած օրէնքներուն և ներկայ կանոնագրութեան:

Յօդ. 2 — Ընկերութեան դրազման առարկան է, ուղղակի կամ անուղղակի, փրանսական հոգասարութեան տակ գըտնըող մերձարեւելեան երկիրներուն մէջ — արտագրութիւնն ու վաճառումը մետաքսէ, արշուեստական մետաքսէ և բամպակիչ ամէն տեսակ կերպասաներու.

Ստեղծումը կամ գնումն ու շահագործումը նմոն կամ հիւսուածեղէնի ձարտարարուեստին հետ կապ ունեցող ձեռնարկներու.

և ընդհանրապէս առեւտրական, ձարտարարուեստական, կալուածական և ելմտական գործառնութիւններ, որոնք, ուղղակի կամ անուղղակի՝ ամբողջութեամբ կամ մասնակի, կապ ունին նախապէս յիշուած առարկաներէն միոյն կամ անոնց նմաններուն և կամ անոնց մօտեցողներուն հետ:

Հ. Հ. Հ. Հ. Հ. Հ.

Յօդ. 3 — Բնկերութիւնը պիտի կոչուի «Ոստայն - Ճէպէլ Մուսայի Հիւսուածեղէնի Անանուն Բնկերութիւն»:

Յօդ. 4 — Բնկերութեան կեղրոնն է Բիթիաս (Ճէպէլ Մուսա, Անտիոք):

Յօդ. 5 — Բնկերութեան տեւողութիւնն է քսան տարի ի բաց առևալ ներկայ կանոնագրութեամբ նախառական երկարաձգման կամ ժամանակէ առաջ լուծման պարագաները:

## Բ.

### ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ - ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ

Յօդ. 6 — Բնկերութեան զրամագլուխ որոշուած է տառըներկու հաղար սուրբական սոկի, որ բաժնուած է իւրաքանչիւրը վեց սուրբական սոկինոց երկու հաղար բաժնետոմսերու:

Յօդ. 7 — Արձանագրուած բաժնետոմսերու փոխարժէքը վճարելի է կամ ընկերութեան կեղրոնը և կամ այդ նպատակին համար նշանակուած որեէ տեղ —

երկու քառորդը արձանագրութեան պահուն.

իսկ մնացորդը, մէկ կամ աւելի անգամներով, ընկերութեան պէտքին համեմատ և վարչական խորհուրդի որոշումով, որը կը ճշդէ գանձելի մասնավճարը և վճարման թուականն ու վայրը.

զրամի պահանջման որոշումը բաժնետեէրուն կը հաղորդուի որոշուած վճարօրէն մէկ ամիս առաջ կամ նամակով և կամ կեղրոնի ամենամօտիկ վայրի թերթին մէջ հրատարակուած յայտարարութեամբ:

բաժնետոմսի որեէ արձանագրութիւն, որուն հա-

մար պահանջելի մասնավճարները չեն գանձուած, կը բնայ ապահովագրեալ նամակով զրկուած ազգարարագրի մը մինչեւ ութը օր անպատասխան մնալու պարագային չեղեալ նկատուիլ:

Յօդ. 8 — Բնկերութեան զրամագլուխը կարելի է մէկ և աւելի անգամներ բարձրացնել նոր բաժնետոմսերու ստեղծումով, համաձայն արտակարգ ընդհանուր ժողովի որոշումին ըստ 41րդ յօդուածի:

Այս ժողովը կ'որոշէ նաև նոր բաժնետոմսերու հրապարակման պայմանները և կամ այդ նպատակին համար իրաւասութիւններ կուտայ վարչական խորհուրդին:

Դրամով վճարելի նոր բաժնետոմսերու հրապարակման պարագային և եթէ արտակարգ ընդհանուր ժողովի տարբեր որոշում զոյութիւն չունենայ՝ նախակին բաժնետոմսերու տէրերը, որոնք իրենց պարագը ամբողջութեամբ վճարած են, ինչպէս և հիմնադրի բաժիններու տէրերը նոր բաժնետոմսերու արձանագրութեան մէջ նախապատռութեան իրաւոնք պիտի ունենան: Այս իրաւունքի կիրարկման ձեւը, ժամանակը և պայմանները կը ճշգուին վարչական խորհուրդին կողմէ:

Արտակարգ ընդհանուր ժողովը՝ կրնայ վերոյիշեալ ձեւով նաև որեւէ պատճառաւ և որեւէ եղանակով զրամագլուխի զեզչ որոշել:

Յօդ. 9 — Եթէ բաժնետոմսերու վրայ ըլլալիք վճարումները չկատարուին 7րդ յօդուածի նախատեսած եղանակով, յապացման համար 6 առ հարիւր տոկոս կը պահանջուի առանց գատարան զիմելու:

Բնկերութիւնը կրնայ ազգարարագրի մը տպա-

հովագրեալ նամակով ուղարկումէն ութը օր յետոյ ծառին տալ, նոյնիսկ երկրորդ օրինակով, այն բաժնեառումները, որոնց վրայ յապազած վճարումներ կան:

Սոյն բաժնեառմներու թիւերը կը հրատարակուին կեղրոնի ամենամօտիկ վայրի թերթին մէջ:

Այս հրատարակութենէն ատան և հինգ օր յետոյ ընկերութիւնը, առանց ուրիշ որեւէ ձեւակերպութեան, կրնայ բաժնեառմներու վաճառու մը կատարել սակարանի մէջ կամ աճուրդով թերացող բաժնեափրոջ հաշուոյն:

Այս ձեւով ծախուած բաժնեառմներու թուղթերը չնջուած կը նկատուին և գնողներուն կը յանձնուին նոյն թիւերը կրող նոր թուղթեր:

Բաժնեառմներու վաճառումէն գոյացած գուտ գումարը կ'անցնի իրաւագրկուած բաժնեափրոջ հաշուոյն, որը պակածը պարտական կը մնայ կամ աւելին կը պահանջէ:

Յօդ. 10 — Առաջին վճարումը կը հաստատուի անուանակիր ընկալագրով մը, որը ընկերութեան վերջնական կազմութենէն յետոյ կը փոխարինուի առժամեայ բաժնեառմնով մը՝ դարձեալ անուանակիր:

Հետագայ վճարումները կ'արձանագրուին սոյն առժամեայ առմնին վրայ:

Վերջնական բաժնեառմնը կը յանձնուի միայն ամբողջական վճարումէն յետոյ:

Ամբողջապէս հաստացուած բաժնեառմները կը դառնան կրողին սեփական և անոնց փոխանցումը կը կատարուի պարզ յանձնումով: Եւ սակայն բաժնեառմներու տէրերը պարտաւոր են վաճառման պարագային ընկերութեան իմաց տալ և գնողին անունն ու հասցէն հաղորդել:

Յօդ. 11 — Առժամեայ ինչպէս նաև վերջնական բաժնեառմները փրցուած կ'ըլլան արմատ ունեցող տեսլերէ և կը կրեն կարգաթիւ մը, ընկերութեան կնիքը և վարչութեան երկու անդամներու ստորագրութիւնը կամ վարչութեան մէկ անդամին ու վարչութեան պատուիրակի մը ստորագրութիւնը:

Յօդ. 12 — Բաժնեառմները ընկերութեան համար անբաժանելի են: Երբ բաժնեառմն մը մէկէ աւելի տէրեր ու նենայ անոնցմէ մէկը միայն կրնայ զանոնք ընկերութեան մօտ ներկայացնել:

Յօդ. 13 — Ամէն մի բաժնեառմն իրաւունք կուտայ ընկերութեան ստացուածքի մէկ մասին վրայ, որ համեմատական է հրատարակուած բաժնեառմներու ընդհանուր թուին:

Ասկէ զատ իրաւունք կուտայ շահու մէկ մասին վրայ 44րդ և 48րդ յօդուածներու տրամադրութեանց համաձայն:

Յօդ. 14 — Բաժնեառմնի մը սեփականութիւնը կը պարտաւորէ ենթարկուիլ ընկերութեան կանոնագրութեան և ընդհանուր ժողովի որոշումներուն:

Բաժնետիրոջ մը ժառանգորդները կամ պահանջատէրերը, ինչ պատճառաւ ալ ըլլայ, չեն կրնար ընկերութեան ինչքերն ու թուղթերը արգելքի տակ առնել, պահանջելով անոնց բաշխումը կամ վաճառումը և ոչ ալ որեւէ ձեւով խառնուիլ վարչական գործերուն. իրենց իրաւունքը արժեցնելու համար պարտաւոր են զիմել ընկերութեան հաշիւներուն ու հաշուեկըցին և ընդհանուր ժողովի որոշումներուն:

Գ.

## ՀԻՄՆԱԴՐԻ ԲԱԺԻՆՆԵՐ

Յօդ. 15 — Ընկերութեան հիմնադիրներուն յատկացուած են չորս հարիւր հիմնադրի բաժիններ ի վարձարութիւն ընկերութեան հիմնումին և գործի կազմակերպման համար իրենց տարած մասնագիտական աշխատանքին:

Հիմնադրի բաժինները ընկերութեան շահէն մաս մը կը ստանան համաձայն 44րդ յօդուածի տրամադրութեանց:

Դ.

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յօդ. 16 — Ընկերութիւնը կը կառավարուի վարչական խորհուրդի մը կողմէ որ կը բարդկանայ ընդհանուր ժողովէն ընարուած հինգ բաժնեաէ բերէ:

Սակայն սուաջին վարչական խորհուրդը կը կազմուի ընկերութեան հիմնադիրներէն և գործի զլուխ կը մնայ մինչև 1937ի սովորական ընդհանուր ժողովը:

Յօդ. 17 — Վարչական խորհուրդի անդամները պարասաւոր են առնուազն քսան բաժնեատոմնի տէր ըլլալ որքան առեն որ պաշտօնի վրայ են:

Սյու բաժնեատոմները սահմանուած են վարչութեան գործունէութիւնը երաշխաւորելու և անձեռնմխելի կերպով ի պահ կը զրուին ընկերութեան սնառուկը:

Յօդ. 18 — Վարչութեան անդամներու պաշտօնը կը տեւէ երեք տարի հետեւեալ մասնաւոր պայմաններով՝ —

Առաջին Վարչական խորհուրդը պաշտօնի վրայ կը մնայ մինչև 1937ի սովորական ընդհանուր ժողովը, որը կ'ընտրէ նոր վարչութիւն մը.

այս թուականէն սկսեալ ամէն անդամ տարեկան ընդհանուր ժողովը վարչութեան անդամներուն որոշ մէկ մասը, համեմատած վարչութեան անդամներու ընդհանուր թուին, կը փոխէ ա՛յնպէս որ ամէն երեք տարուայ ժամանակաշրջանի մը մէջ վարչութիւնը ամրողութեամբ փոխուած կ'ըլլայ.

այս տրամադրութեանց առաջին կիրարկման համար պաշտօնէ զագարման կարգը կ'որոշուի վիճակով վարչութեան նիստին մէջ, առաջին անդամ այս ձեռով կարգը հաստատուելէ յետոյ պաշտօնէ զագարումը անդի կ'ունենայ հնութեան կարգով և ամէն մի վարիչի պաշտօնավարութեան շրջանը կ'ըլլայ երեք տարի։ Պաշտօնէ զագրած ամէն անդամ վերընտրելի է։

Յօդ. 19 — Եթէ որևէ պատճառով վարչութեան անդամներէն մէկը պակսի, վարչութիւնը զայն առժամարար փոխարինելու համար կրնայ մէկը հրաւիրել։

Ասոր յաջորդող տարեկան ընդհանուր ժողովը իր առաջին նիստին վերջնական ընտրութեան կը ձեռնարկէ։

Պակսած անդամի մը փոխարէն ընտրուած վարիչը պաշտօնի վրայ կը մնայ այնքան ատեն որքան իր նախորդը տակաւին իրաւունք ունէր։

Եթէ առժամեայ առնուանումները ընդհանուր ժողովին կողմէ չվաւերացուին իսկ, վարչութեան սոււած որոշումներն ու կատարած գործերը գարձեալ օրինական կը մնան։

Յօդ. 20 — Ամէն տարի սովորական ընդհանուր ժողովին

յաջորդող իր առաջին նիստին մէջ վարչութիւնը իր անդամներէն մէկը կ'ընտրէ նախագահ, և եթէ յար-մար դատէ, մէկ ուրիշն ալ փոխ-նախագահ, որոնք միշտ վերընտրելի են:

Նախագահի և փոխ-նախագահի բացակայութեան վարչութիւնը ամէն անդամ իր անդամներէն մին կը նշանակէ այդ նիստը վարելու համար:

Վարչութիւնը կ'ընտրէ նաև իր քարտուղարը, որ կրնայ նոյնիսկ գուրսէն մէկը ըլլալ:

**Յօդ. 21 —** Վարչական խորհուրդը կը հաւաքուի իր նախա-գահի կամ իր անդամներու կէսի հրաւէրին վրայ. այնչափ անդամ որ ընկերութեան շահը կը պահանջէ և առնուազն ամիսը մէկ անդամ, ըլլայ ընկերութեան կեզրոնը, ըլլայ ժողովի հրաւէրին մէջ յիշուած ուրիշ որեւէ վայր:

Ժողովին որոշումները օրինաւոր նկատուելու հա-մար առնուազն անդամներու կէսը պէտք է ներկայ ըլլայ:

Ժողովին որոշումները ներկայ անդամներու մե-ծամասնութեամբ կը տրուին և ձայներու հաւասարու-թեան պարագային նախագահի ձայնը գերակշիռ է:

Ոչ ոք կրնայ վարչութեան մէջ փոխանորդու-թեամբ քուէարկութեան մասնակցիլ:

**Յօդ. 22 —** Վարչութեան որոշումները կը հաստատուին մաս-նուոր առմարի մը մէջ արձանագրուած տաենագրու-թիւններով, որոնք ստորագրուած կ'ըլլան ժողովին ներկայ եղող անդամներէն:

**Յօդ. 23 —** Վարչական խորհուրդը օժառւած է ամենալայն իրաւասութիւններով գործելու համար ընկերութեան անունով և ընելու կամ ընել առլու համար ընկերու-

թեան նպատակին հետ կապ ունեցող ամէն տեսակ ակտեր ու գործառնութիւններ:

Ի մասնաւորի հետեւեալ իրաւասութիւնները ու-նի, որոնք կը յիշուին միայն առանց սակայն սահ-մանափակելու.

ան կը ներկայացնէ ընկերութիւնը հասարակու-թեան և պաշտօնական հաստատութեանց առաջ.

Կը պատրաստէ ընկերութեան ներքին կանոնա-գրութիւնները.

Կը հաստատէ ներկայացուցչութիւններ, մթերա-նոցներ, զրասենեակներ կամ մասնաճիւղեր ուր որ պէտք տեսնէ, զանոնք կը տեղափոխէ կամ կը ջնջէ.

Կը նշանակէ և կը զաղրեցնէ ընկերութեան բու-լոր պաշտօնեանները, կը ճշգէ անոնց վարձատրու-թիւնը և ընդունելութեան ու հրաժարեցման միացեալ պայմանները.

Կ'որոշէ ընկերութեան ընդհանուր ծախսերը և մթերքներու գնումները.

Կը գանձէ ընկերութեան պահանջները և կը վը-ձարէ պարտքերը.

Կ'որոշէ տրամադրելի գումարներու դետեզումը և պահեստի գումարներու գործածութիւնը.

Կը սասրագրէ, կը փոխանցէ, կ'ընդունի և կը ստացագրէ ամէն տեսակ առեւտրական տոմսեր.

Կ'արտոնէ զնումը և փոխանակութիւնը կալուա-ծական իրաւանքներու ու ինչքերու ինչպէս և վա-ճառումը անպէտ նկատուածներուն.

Կը կատարէ շինութիւններ, սարքաւորումներ և նման ամէն տեսակ գործեր.

Կը բանայ զրամատուներու մէջ ընթացիկ հա-շիւներ և անոնց համար չէքեր ու մուրհակներ կը ստորագրէ.

կ'արտօնէ ամէն տեսակ վարկ և ավանս,  
կը կնքէ փոխառութիւններ վարկի կամ այլ միջուցաւ. կը կատարէ ամէն տեսակ զատական գործողութիւններ ըլլայ իրրե պահանջող ըլլայ իրրե պաշտպանող.

կ'որոշէ ընդհանուր ժողովին ներկայացուելիք վիճակացոյցները, ցուցակագրութիւնները և հաշիւները.

կը քննէ իրեն եղած ամէն տեսակ առաջարկներ և կը պատրաստէ օրակարգը:

Յօդ. 24 — Վարչութիւնը կրնայ իր անդամներէն մէկ կամ աւելի անձերու անհրաժեշտ իրաւասութիւնները տալ, գործադրերու համար իր որոշումները և վարելու համար ընկերութեան ընթացիկ գործերը:

Վարչութիւնը կրնայ նաև մէկ կամ աւելի անօրէններու իր յարմար զատած իրաւասութիւնները տալ, վարելու համար ընկերութեան արհեստագիտական ու առեւտրական գործերը, և անոնց հետ պայմանագրութիւններ կնքել:

Վարչութիւնը կրնայ գարձեալ մնայուն կամ տաժամեայ անօրէն ժողովներ և փորձագէտներու կամ խորհրդականներու յանձնախումբեր նշանակել:

Վարչութիւնը ասոնցմէ զատ կրնայ և իր յարմար զատած որևէ մէկ անձին իրաւասութիւններ տալ, մէկ կամ աւելի որոշ խնդիրներու համար:

Յօդ. 25 — Ընկերութեան վերաբերեալ ամէն տեսակ վաւերաթուղթեր, հաստատուած վարչութենէն, ինչպէս նաև արժէքներու և զրամներու ստացումը, զբամատուններու, պարտատէրերու և աւանդապահներու վըրայ քաշուած փոխգիրները և այլ ամէն տեսակի տեսական ստմսերու ձանաչումը, փոխանցումը, ընդու-

նումը կամ ստացագրումը պէտք է միշտ կատարուին երկու վարիչներու ստորագրութեամբ, եթէ վարչութիւնը փոխանորդութիւն չէ տուած իր մէկ անդամին, անօրէնի մը կամ այլ ներկայացուցչի մը:

Յօդ. 26 — Վարիչները իրենց պաշտօնի բերմամբ ընկերութեան յանձնառութեանց համար ոչ անհատարար և ոչ ալ հաւաքաբար, անձնական պատասխանատուութիւն չեն ստանձներ: Անոնք պատասխանատու են միայն իրենց պաշտօնի կատարման համար:

Յօդ. 27 — Վարչութիւնը իր յարմար գատած եղանակով իր անդամներուն միջե կը բաժնէ ընդհանուր ժողովի կողմէ իրեն յատկացուած վարձարութիւնը ինչպէս նաև 44րդ յօդուածի համաձայն իրեն վերապահուած չահարամինը:

## Ե.

## ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉՆԵՐ

Յօդ. 28 — Ամէն տարի սովորական ընդհանուր ժողովը մէկ կամ աւելի, ընկերակից կամ ոչ, հաշուեքննիչներ կ'ընարէ, որոնց պարտականութիւնն է յաջորդ տարուայ ընդհանուր ժողովին տեղեկագիր ներկայացնել ընկերութեան կացութեան ինչպէս նաև վարչութեան կողմէ ներկայացուած հաշուեկիսի ու հաշիւներու մասին:

Հաշուեքննիչները վերըանրելի են:

Ընդհանուր ժողովի համար որոշուած թուականին նախորդող եռամսեայի ընթացքին և ամէն անզամ որ յարմար զատեն ընկերութեան շահուն հա-

մար հաշուեքննիչները իրաւունք ունին ընկերութեան ստմարներն ու գործառնութիւնները քննելու:

Եթէ ընդհանուր ժողովը մէկէ աւելի հաշուեքըննիչներ նշանակած է, անոնցմէ մին կրնայ առանձինն գործել երբ միւսները, վախճանած, հրաժարած, մնրած կամ այլ արգելվներ ունեցած են:

Հաշուեքննիչները իրաւունք ունին վարձատրութիւն մը ստանալու, որուն քանակը ընդհանուր ժողովը կ'որոշէ:

Բացառաբար առաջին հաշուական աարիին համար, որ կը կերջանայ 1937ին, հաշուեքննիչը կը նըշանակուի հիմնադիրներու կողմէ:

## Զ.

## ԸՆԴԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

ա - Սալորական և արտակարգ ընդհանուր ժողովներուն հասարակաց արամազրութիւններ .

**Յօդ. 29 —** Ամէն աարի հաշուեփակի թուականին յաջորդող վեց ամիսներու ընթացքին բաժնեաէրերը ընդհանուր ժողով կը գումարեն վարչութեան հրաւէրին վրայ, որը կ'որոշէ աեղը, օրը և ժամը:

Վարչութիւնը կրնայ նաև ընդհանուր ժողովը բացառիկ նիստի հրաւէրել. նոյնիսկ ստիպուած է այդ ընել երբ զրամազլուխին առնուազն քառորդը ներկայացնող բաժնեաէրեր պահանջ գնեն:

Ծնդհանուր ժողովի հրաւէրները կ'ըլլան որոշուած թուականէն առնուազն քսան օր առաջ, կեղունին ամենամօտիկ վայրի թերթին մէջ հրաժարակուած յայտարարութիւններով: Այս ժամանակամիջու-

ցը կարելի է տասը օրուան զեղսել երկրորդ հրաւէրի վրայ գումարուելիք ընդհանուր ժողովներուն համար:

Հրաւէրի յայտարարութիւնները պէտք է նաև ամփոփ կերպով օրակարգը պարունակեն:

**Յօդ. 30 —** Ծնդհանուր ժողովներու մասնակցիլ փափաքող բաժնեաէրերը պարտաւոր են իրենց սեփական բաժնեառմներու քանակը հասաւաող փաստաթուղթերը ունենալ:

Բաժնեանութեան կրնան ընդհանուր ժողովին ներկայացուցիչներ զրկել. բայց մէկը որ անդամ չէ ընդհանուր ժողովին չկրնար բաժնեաէր մը ներկայացնել:

**Յօդ. 31 —** Ծնդհանուր ժողովին կը նախագահէ վարչական խորհուրդի նախագահը կամ փոխ - նախագահը. իսկ անոնց լացակայութեան պարագային, վարչութեան կողմէ նշանակուած մէկ վարիչը:

Դիւանը ունի նաև ատենազպիր մը և քուէանաւաք մը. այս պաշտօնները կը կաարուին ներկաներու մէջէն ամէնէն աւելի բաժնեառմա ունեցող կամ ներկայացնող երկու անձերուն կողմէ:

Ամէն ընդհանուր ժողովի ներկայութեան ցանկ մը կը պատրաստուի, որ կը պարունակէ ներկայ եղող կամ ներկայացուող բաժնեաէրերու անունն ու հասցէն ինչպէս նաև իրենց ունեցած բաժնեառմներու թիւը: Ներկայութեան թերթը կը ստորագրուի ներկայ ամէն բաժնեաէրերուն կողմէ և զիւանէն վաւերացուելէ յետոյ ի պահ կը զրուի ընկերութեան կեղունը, փափաքողներուն ցոյց տրուելու համար:

**Յօդ. 32 —** Օրակարգը կորոշուի վարչութեան կողմէ: Օրա-



կարգի կ'անցնին միայն վարչութեան կամ հաշուեաքնիներու առաջարկները ինչպէս և ընդհանուր ժողովի իրաւասութեանց ենթակայ և առնուազն զրամագուխի քառորդը ներկայացնող բաժնետէրերու ըստարազրութեամբ գոնէ ամիս մը առաջ վարչութեան հազորդուած խնդիրները:

Օրակարգէն զուրս զանուող որեւէ ինդրի մասին կարելի չէ որոշում տալ:

**Յօդ.** 33 — Ընդհանուր ժողովին որոշումները կը հաստատեն առաջարկութիւններով որոնք մասնաւոր տոմարի մը մէջ կ'արձանագրուին և զիւանին կողմէ կը ստորագրուին:

**Յօդ.** 34 — Ընդհանուր ժողովը, օրինաւոր կերպով զումարուած, կը ներկայացնէ բաժնետէրերու ընդհանուրութիւնը:

Ժողովին որոշումները, երբ տրուած են օրէնքի և կանոնագրութեան համաձայն, պարապիր են ամէն բաժնետէրերուն համար նոյնիսկ բացակայ և լողիներուն և համակարծիք չզանուազներուն:

## Բ.- ՍՈՎՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

**Յօդ.** 35 — Սովորական ընդհանուր ժողովը (տարեկան կամ բացառիկ նիստի հրաւիրուած) կը բազկանայ այն ամէն բաժնետէրերէն, որոնք նուազազոյն տասը բաժնետոմս ունին և պահանջուած վճարումները կատարած են:

Առկայն տասը բաժնետոմսէն պակաս ունեցողները կրնան միանալ այս թիւը կազմելու համար և իրենցմէ մէկը ներկայացուցիչ զրկել կամ ժողովի ան-

դամներէն մէկը ներկայացուցիչ նշանակել:

**Յօդ.** 36 — Որպէսզի ընդհանուր ժողովի որոշումները օրինաւոր ընդունուին, պէտք է որ ներկայ բաժնետէրերը առնուազն ընկերութեան զրամագուխին մէկ քառորդը ներկայացնին:

Եթէ առաջին հաւաքոյթը այս պայմանը չլրացնէ, ընդհանուր ժողովը երկորդ անգամ նիստի կը հրաւիրուի 29 րդ յօդուածի համաձայն: Այս անգամ ինչ որ ալ ըլլայ ներկաներու թիւը, որոշումները օրինաւոր կը նկատուին, պայմանաւ որ միայն առաջին հաւաքոյթին համար յայտարարուած օրակարգին շուրջ ըլլան վիճաբանութիւնները:

**Յօդ.** 37 — Սովորական ընդհանուր ժողովի որոշումները կը զրուին ներկայ անդամներու ձայներու մեծամասնութեամբ, ձայներու հաւասար բաշխումի պարագային ժողովի նախագահին ձայնը գերակիո է:

Ժողովի ամէն մի անգամը ունի այնքան ձայն որքան անգամ որ տասը բաժնետոմս ունի կամ կը ներկայացնէ, առանց սակայն առաւելագոյն տասնեւհինդ ձայնէ աւելիի իրաւունք ունենալու թէ անձնապէս և թէ իրեւ ներկայացուցիչ:

**Յօդ.** 38 — Սովորական ընդհանուր ժողովը կը լսէ վարչական խորհուրդի աեղեկագիրը ընկերութեան գործունէութեան մասին ինչպէս նաև հաշուեքննիչներու տեղեկագիրը ընկերութեան կացութեան և վարչութեան կողմէ ներկայացուած հաշուեկշոփ ու հաշիւներումասին:

Ան կը քննէ, կը վաւերացնէ կամ կը սրբազրէ հաշիւները և կ'որոշէ արուելիք չահաբաժինը.

կը նշանակէ, կը փոխարինէ կամ կը վերընարեց վարիչներն ու հաջուելքննիչները.

կը ճշգէ վարչական խորհուրդին ինչպէս նաև հաշուուելքննիչներուն վարձատրութիւնները.

կ'արտօնէ փոխառութիւններ պարտավուզիմերու հրապարակումով, գրադի փոխարէն կամ այլ ձեւով.

կուտայ նաև որոշումներ այն ամէն առաջարկներուն մասին որ օրակարգի անցած են և արտակարգ ընդհանուր ժողովի իրաւասութեանց մէջ չեն մտներ:

Հաշուելշարի և հաշիւներու վաւերացման մասին որոշում կրնայ արուիլ միայն հաշուելքննիերու կողմէ ներկայացուած տեղեկադրի ընթերցումէն յետոյ, հակառակ պարապային որոշումը չեղեալ կը նկատուի:

#### Գ - ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 39 — Արտակարգ ընդհանուր ժողովը կը կազմուի 35րդ յօդուածի համաձայն և պարտազիր կերպով ողբեր է ներկայացնէ առնուազն զրամագլուխի կէսը:

Յօդ. 40 — Որոշումները կը արուին հաւաքոյթին ներկայ զրամագլուխի մեծամասնութեամբ:

Ժողովի ամէն մի անգամը ունի այնքան ձայն որքան որ բաժնետոմս ունի կամ կը ներկայացնէ առանց սահմանափակումի:

Յօդ. 41 — Վարչական խորհուրդի նախաձեռնութեամբ և առաջարկութեամբ, արտակարգ ընդհանուր ժողովը կրնայ որեւէ տեսակի փոփոխութիւն մտցնել ընկերութեան կանոնագրութեան մէջ այն չափով որ օրէնքը կը թոյլատրէ (ի բաց տուալ հասապային յիշուած

ընկերութեան նպատակին վերաբերեալ սահմանափակումը):

Մասնաւորաբար կ'որոշէ —  
զրամագլուխի յաւելումը կամ զեղչը.

բաժնետոմսներու ձեւին, պայմաններուն և փոխանցելութեան ամէն տեսակի փոփոխումը.

տեւողութեան երկարաձգումը, կրճատումը կամ վաղաժամ լուծումը.

միացումը կամ ձուլումը այս ընկերութեան, ուշրիչ կազմուած կամ կազմուելիք ընկերութիւններու հետ.

առարկը ձեւի ընկերութեան վերածումը.

ընկերութեան շահի կամ ինչքի բաշխման եղանակին փոփոխումը.

ամէն ահամկ փոփոխում, ընկերութեան նպատակին ի մասնաւորի գործունէութեան զաշտի ընդարձակումը կամ սեղմումը, առանց կարենալ հիմնովին փոփոխութեան նպատակը կամ զայն իր էութեան մէջ խաթարելու:

#### Է.

#### ՎԵՑԱՄՍԵԱՅ ՎԻՃԱԿԱՑՈՅՅ - ԳՈՅԱՑՈՒՑԱԿ ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ - ՇԱՀՈՒ ԲԱՇԽՈՒՄ

Յօդ. 42 — Հաշուական տարին կը սկսի Յուլիս 1 ին և կը վերջանայ Յունիս 30 ին:

Բացաւաբար առաջին հաշուական տարին կը ներկայացնէ ընկերութեան կազմութեանէն մինչեւ 30 Յունիսի 1937 ի շրջանը:

Յօդ. 43 — Ամէն վեցամսեայի կը պատրաստուի ամփոփ

վիճակացոյց մը ընկերութեան ինչքերուն և պարագեռուն կացութիւնը ներկայացնող։ Այս վիճակացոյցը հաշուեքննիչներու տրամադրութեան տակ կը դրուի։

Բաց ասդի ամէն տարի օրէնքին համաձայն կը պատրաստուի ընկերութեան ինչքերուն և պարագեռուն կանոնաւոր ցուցակագրութիւնը։ Ասոր մէջ ինչքերու կողմի զանազան վլուխներէն կը պակսեցուին վարչական խորհուրդին կողմէ որոշուած արժէքազըրդումները։

Գոյացուցակը, հաշուեկշիռը և Շահ ու Զէնի հաշիւը առառաւելն ընդհանուր ժողովին երեսուն օր առաջ կը արամագրուին հաշուեքննիչներուն և յետոյ կը ներկայացուին նոյն ընդհանուր ժողովին։

Ընդհանուր ժողովին նախորդող տասն և հինգ օրերու ընթացքին որեէ մէկ բաժնեաէք կրնայ ընկերութեան կեղրոնին մէջ ծանօթանալ հաշուեկշիռն ու բաժնետէրերու ցանկին և նոյնիսկ, ծախքերը վճարելու պայմանաւ, կրնայ նաև հաշուեկշոփին ու հաշուեքննիչներու տեղեկագրին ընդօրինակութիւնները ստանալ։

Յօդ. 44 — Շահագործման արգիւնքը, որ կը հաստատուի ասթեկան վիճակացոյցով, իրմէ պակսեցուելէ յետոյ ընդհանուր ծախքերն ու ընկերութեան մասնաւոր ծախքերը, ինչքերու ամէն տեսակ արժէքազրկումներն և առեւտրական ու ձարաարտեսական վըտանգներուն զիմագրաւելու համար կազմուելիք ամէն տեսակ պահեստաները, կը ներկայացնէ զուա շահը։

Այս զուա շահը կը բաշխուի հետեւեալ ձեւով —

1 - հարիւրին հինգ օրէնքով պարտադիր պահեստի հաշույն։ Պարտազրութիւնը կը վերնայ երբ պահեստի

գումարը կը հասնի ընկերութեան զրամագլուխի կէսին, իսկ կրկին ի զօրու կ'ըլլայ երբ որեւէ պատճառով պահեստի գումարի որոշուած սահմանէն վար կ'ըլլայ։

2 - հարիւրին հինգ ընկերութեան աշխատաւորներուն, այս հարիւրին հինգի բաշխումը կը կատարուի վարչութեան ձեռքով։

3 - հարիւրին հինգ վարչական խորհուրդին։

4 - մնացեալը ընդհանուր ժողովի արամագրութեան տակ միօրինակ կերպով բաշխուելու համար զրամագլուխի բաժիններուն և հիմնագրի բաժիններուն միջև, այնպէս որ ամէն մի հիմնագրի բաժնի յատկացուած շահհարածինը հաւասար ըլլայ զրամագլուխի բաժնի մը արուածին։

Եւ սակայն սովորական ընդհանուր ժողովը կը բնայ, վարչական խորհուրդէն եկած առաջարկին վրայ, որոշել, որ գրամագլուխի եւ հիմնագրի բաժիններուն յատկացուելիք շահի մասէն իր յարմար զատած գումարները վերցուին, ըլլայ փոխազրուելու համար յաջորդ տարուան, ըլլայ զործածուելու համար յաւելիալ արժէքազրկումներու և կամ անցնելու համար մէկ կամ աւելի բացառիկ, ընդհանուր և մասնաւոր պահեստի հաշիւներու։

Յօդ. 45 — Շահաբաժիններու վճարումը կը կատարուի ամէն տարի վարչական խորհուրդին կողմէ որոշուած տեղերը և թուականներուն։

Կրողին սեփական բաժնետամսերուն ինչպէս և հիմնագրի բաժիններուն շահաբաժինները կը վճարուին արժեթուղթը կամ կարոնը կրողին։

Առաջին վճարօրէն մինչև հինգ տարի չպահանջանած չուած չահաբաժինները կը չնշուին և կը մնան ընկերութեան:

## Ը.

## ԼՈՒԾՈՒՄ - ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐ

Յօդ. 46 — Արեւէ ատեն և որեւէ պարագայի արտակարդ ընդհանուր ժողովը կրնայ, վարչութեան կողմէ եղած առաջարկի մը վրայ, ընկերութիւնը լուծուած յայտարարել:

Յօդ. 47 — Երբ ընկերութեան դրամագլուխի կէսը կորսւած է, վարչական խորհուրդը պարտաւոր է արտակարգ ընդհանուր ժողով գումարել որոշելու համար թէ պէտք է ընկերութիւնը շարունակել թէ լուծել: Եյս ժողովը, որպէսզի օրինական ըլլայ, պէտք է 39րդ, 40րդ և 41րդ յօդուածներու պայմանները լրացնէ:

Յօդ. 48 — Ընկերութեան պայմանաժամը լրանալուն կամ վաղաժամ լուծման պարագային ընդհանուր ժողովը, վարչական խորհուրդի առաջարկին վրայ, կը ճշգէ հաշուեյարդարի ձեւ և կ'անուանէ մէկ կամ աւելի հաշուեյարդարներ, որոնց իրաւասութիւններն ալ ինք կը սահմանէ:

Հաշուեյարդարներու անուանումը վերջ կուտայ վարչական խորհուրդի և հաշուեքննիչներու պաշտօններուն:

Կանոնաւորապէս կազմուած ընդհանուր ժողովը հաշուեյարդարի միջոցին նոյն իրաւասութիւնները ուշնի ինչ որ ունէր ընկերութեան ժամանակ: Մասնաւ

ւորարար իր իրաւասութիւնն է վաւերացնել հաշուեյարդարներու հաշիւները եւ զանոնք պատասխանաւութենէ ազատ կացուցանել:

Ընկերութեան յանձնառութիւններու և պարտաքերու չիջումէն յեսոյ հաշուեյարդարի զուտ արդիւնքէն նախ ամբողջութեամբ կը վերագարձուի բաժնեառմսերու զրամագլուխը և յեսոյ աւելին կը յատկացուի զրամագլուխի ու հիմնադրի բաժիններուն, համաձայն շահու բաշխման եղանակին:

## Թ.

## ԶԱՆԱԶԱՆՔ

Յօդ. 49 — Ներկայ կանոնագրութեան պետութեան կողմէ վաւերացուելէն և յայտարարուած դրամագլուխի նըւազագոյն 49 առ հարիւրը արձանադրուելէ յեսոյ միայն կրնայ ընկերութիւնը աշխատանքի և զործունութեանց ձեռնարկել:

Յօդ. 50 — Ներկայ կանոնագրութիւնը ինչպէս և հետագայ փոփոխութիւնները հանրութեան պիտի ծանօթացուին:



di cui si tratta. Alcuni di questi sono  
della stessa specie che sono stati  
descritti sopra, ma altri sono  
di tipo diverso. In questi ultimi  
il campo visivo è molto più  
limitato e il campo di  
movimento è assai più piccolo.  
Alcuni di questi animali hanno  
una specie di dispositivo speciale  
che consente loro di vedere  
soltanto la direzione in  
cui si muovono le loro  
prede.

II

## REFLEXE

Il termine "reflex" viene usato per indicare un  
movimento automatico che non è controllato  
da un organo sensoriale. I reflexi sono  
tipici di molti animali, compresi i  
vermi, gli insetti e gli uccelli.  
I reflexi sono molto importanti  
per la sopravvivenza degli animali,  
poiché consentono loro di reagire  
velociamente alle varie situazioni  
che si incontrano nel loro  
ambiente.

II

ԱՐԱՋԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Պ. Պ. ՄՈՎՍԵՍ ՏԵՐ ԳԱԼՈՒՄՑԵԱՆ  
ՀՐԱԶ ՓԱՓԱԶԵԱՆ  
ՆՇԱՆ ՓԱԼԱՆՁԵԱՆ  
ԱՐԱՄ ԳԱԶԱՆՁԵԱՆ  
ՎԱՀԵ ՄԵԹԵԱՆ



27.345



ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱԼԵՊԻ ՀԱՍՑԵՆ

VOSDAIN S. A.

B. P. 310

Alep